

ըին մեռնելովը (1390)՝ իր յաջորդն — Ենրիկ Գ — 13 ապրիլ 1391 թուակիր հրովարտակով ետ առած է Լեւոնէ Մազրիզի տանուտիրութիւնը . իսկ միւս կողմէ կանոնաւոր կերպով զանձած է Կարոյոս Զ-է իրեն յատկացուած ամսականները , ինչպէս կը տեսնուի հետեւեալ վաւերագրերէն , որոնց իսկականները պահուած են Պարիսի Ազգ. Մատենագարանին մէջ (1) :

### Անասկան այլ անդորրագիր Լեւոնի (2)

[Լեւոն], շնորհիւն Աստուծոյ , բազաւոր Հայոց : Ամէն անոնք որ ներկայ գրութիւնս պիտի տեսնեն՝ զիտան , որ պատերազմական գործի ստեմանուած [նպատակներու] ընդհանուր հարկահաւաք Յակոբ Հեմոնէ ստացանք հինգհարիւր Քրանկ ոսկի , զոր պերճաւոր [բազաւորք մեզ] պատուիրեց ամէն ամիս ստանալ իրմէ , մէկ տարուան համար , սկսելով վերջին յունուարի առաջին օրէն մինչեւ յառաջիկայ դեկտեմբերի վերջին օրը , ինչպէս կը տեսնուի յիշեալ պերճաւորք բազաւորին կողմէ այս մասին տրուած հրամանագրէն , որ գրուած է Մանս-ի մէջ , 1389 մարտ 3-ին : Յիշեալ հինգհարիւր Քրանկ ոսկիէն շատ քոն ենք եւ ամբողջութեամբ ստացած . իսկ վերջիշեալ պերճաւորք բազաւորք , յիշեալ ընդհանուր հարկահաւաքն ու միւս բոլոր անձերն որոնց անդորրագիր տալ պէտք էր՝ պարտէ ազատ կը կացուցանենք : Ի վկայութիւն սառ՝ ներկայ անդորրագրին վրայ մեր անձնական կնիքը դնել տուինք : Տաւալ ի Պարիս , 23-րդ օրն մարտի , շնորհաց քաւին 1389 :

\*  
\* \*  
\*

### Այլ հրահանագիր Կարոյոսի Զ (3)

Կարոյոս , շնորհիւն Աստուծոյ , թագաւոր Ֆրանսայի . Պատերազմական գործի սահմանուած նպատակներու վրայ մեր սիրելի եւ հաւատարիմ պաշտօնակալ խորհրդականներուն՝ ողջոյն եւ սէր : Կը հրամայենք եւ կը պատուիրենք ձեզ , որ յիշեալ նպատակներու ընդհանուր հարկահաւաք Յակոբ Հեմոնի միջոցով մեր յոյժ պատուական եւ

(1) Ոմանք կը կարծեն քե Լեւոն կրկին անգամ Սպանիա գացած ըլլալ : Սիւսլ է ասիկա եւ՝ ո՛չ մէկ վաւերագրով հաստատուած :

(2) Բնագիրը տե՛ս գրքիս վերջը՝ Document XXVI.

(3) Բնագիրը տե՛ս գրքիս վերջը՝ Document XXVII.